ԴԱՎԻԹ-ԲԵԿԻ ՊԱՅՔԱՐԸ ՕՍՄԱՆՅԱՆ ՆԵՐԽՈՒԺՄԱՆ ԴԵՄ ԵՎ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԻՐԱՆԱԿԱՆ ՀԱԿԱՕՍՄԱՆՅԱՆ ԴԻՄԱԴՐԱԿԱՆ ՈՒԺԵՐԻ ՀԵՏ

Պատմ. գիտ. դոկտոր Հ. Դ. ՓԱՓԱԶՅԱՆ

Դավիթ-բեկի գլխավորությամբ 1722—1728 թթ. Սյունիքում մղված ազատագրական կռիվների պատմության հիմնական սկզբնաղբյուրը Վենետիկի Մխիթարյան հայրերից, սեբաստացի Ղուկաս Ստեփանոսյանի գրի առած պատմությունն է, որը նախապես գիտական շրջանակներին ծանոթ էր «Ընտիր պատմութիւն Դաւիթ-բէգին և պատերազմաց հայոցն Խափանու» վերնագրով, Ա. Գուլամիրյանի հրատարակությամբ[1], իսկ վերջերս Սամվել վարդապետ Արամյանի աշխատասիրությամբ լույս տեսան այդ կարևոր աղբյուրի ճշգրտված նախնական և համապատում բնագրերը՝ «Պատմութիւն Ղափանցւոց» վերնագրով[2]։ Եթե առաջին հրատարակությունը գիտական շրջանառության մեջ մտավ որպես իրեն շարժման նախաձեռնող ներկայացնող Ստեփանոս Շահումյանի, մասամբ նաև իր զինակիցներից ոմանց պատմածի հիման վրա Ղուկաս Ստեփանոսյանի կողմից շարադրված պատմություն, ապա այս նոր, լիակատար հրատարակությունը եկավ վերջնականապես հաստատելու, որ պատմությանը հիմք են հանդիսացել շարժման կարևոր մասնակիցներից՝ նույն Ստեփանոս Շահումյանի և հավասարապես նաև Տեր-Ավետիսի բանավոր նկարագրությունները։ Ս. Արամյանի հրատարակած Ա բնագիրը այդ երկու անձնավորությունների պատմածի գրեթե անմիջական գրառումն է[3], իսկ Բ բնագիրը այդ զույգ գրառումների հիման վրա խմբագրված «համապատումը»՝ ամփոփված առանձին վերնագրեր կրող երեք գլուխներում[4]։ Այս պարագաներում, հասկանալի է, որ նշված բնագրերում շարժման հանգամանքների և նկարագրված դեպքերի ու դեմքերի վերաբերյալ որևէ այլ աղբյուրի ամեն մի տեղեկություն կարող է ամրացնել մեր վստահությունը այս եզակի պատմական երկասիրության նկատմամբ և բարձրացնել նրա արժեքը, որպես ճշմարտապատում և հավաստի սկզբնաղբյուր։

Այս առումով ուշագրավ տեղեկություն է պարունակում Մեսրոպ եպիսկոպոս Տեր-Մովսիսյանի 1922 թ. հրատարակած, 1746 թ. մի հիշատակարանը, որտեղ, որպես Դավիթ-բեկի աներորդին հանդես եկող Ղուզանենց Փարսադան-բեկի որդի Թաղին, թվարկելով իր գերդաստանի անդամներին, եղբայրներից մեկի մասին գրում է. «Մեր միւս եղբայր Աբտլմասեհն որ Վրաստան պարոնի հրամանաւն գնացին տեղն զօրաժողով առնելոյ, որ եղբայրս էլ զօրպ էր, որոց գլխաւորն էր Ալիխանի որդի Դաւութ-պէկն, որ է իմ փեսայ, որք ընդ պարսից և օսմանցոց բազում պատերազմս ետուն, և ի վախճանի անկան ի մարտին»[5]։ Դավիթ-բեկին վերաբերող բանավոր զրույցներից ու ավանդություններից բա-

---

1 *Դաւիթ բէգ. Ընտիր պատմութիւն Դաւիթ բէգին և պատերազմաց հայոցն Խափանու... Վաղարշապատ, 1871։*

2 *Դաւիթ բէկ կամ «Պատմութիւն Ղափանցւոց», աշխ. Հ. Սամվել վրդ. Արամյան. Վենետիկ, 1978 (այսուհետև՝ Պատմութիւն Ղափանցւոց)։*

3 *Նույն տեղում, էջ 119—145։*

4 *Նույն տեղում, էջ 147—181։*

5 *Բանբեր Հայաստանի գիտական ինստիտուտի, գիրք Ա և Բ, Վաղարշապատ, 1921—1922, էջ 136—137, հմմտ.։*